

ՔԱՂՈՒԱԾ ԿԱՆՈՆԱՅ

ԽԱՆԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

Ա. Խալիպեան Ուսումնարանին աշակերտները երեք կարգ կբաժնուին .

- ա) Լիաթոշակք .
- բ) Կիսաթոշակք .
- գ) Զրիավարժք :

Ամենքն ալ ուսումնարանին մէջ կբնակին , եւ միակերպ է ամենուն սնունդը , հագուստը , եւ ամենայն պէտք եղած խնամքը :

Բ. Ամէն մէկ աշակերտին վճարելու տարեկան թոշակն է երկուհարիւր յիսուն (250) բուպի արծաթ : Անկէջ իզատ , աշակերտին ուսումնարան մտած ժամանակը ' միայն մէկ անգամ վճարուելու հանդերձագինն է յիսուն (50) բուպի : — Ճանապարհի ծախքն ալ աշակերտաց վրայ է :

Գ. Երկու կամ երեք եղբարց մէկը , այսինքն երբոր երկու կամ երեք եղբարք մէկտեղ գրուելուն ուսումնարանին մէջ , մէկուն համար պիտի վճարուի 175 բուպի , երկրորդին կամ երրորդին համար 250 : — Կիսաթոշակ աշակերտք ալ պարտական են վճարել հանդերձագինը , այսինքն 50 բուպին :

Դ. Աշակերտաց թոշակին հատուցումը տարին երկու անգամ կլինի , այսինքն վեց ամիսէ վեց ամիս . թոշակին առաջին կէսը կվճարուի ' նոցա ուսումնարան մտած ժամանակը , հետեւ ալ հանդերձագինը . եւ երկրորդ կէսը ' վեց ամսէն ետեւ :

Ե. Իւրաքանչիւր աշակերտ թէ լիաթոշակ եւ թէ կիսաթոշակ , պէտք է բերէ հետը իւր տնէն

- | | |
|-------------------|---------------------|
| 12 շապիկ . | 6 երեսարբիչ . |
| 12 վարտիք . | 6 սաւան . |
| 12 թաշկինակ . | 6 անձեռոց սեղանոյ . |
| 12 զոյգ գուրպայ . | 1 զոյգ կոշիկ : |

Զ. Ուսումնարան մտնող աշակերտաց տարիքը 14-էն վեր եւ 8-էն վար պիտի չլինի :

Է. Խալիպեան ուսումնարանին մէջ վեց դասարան (*class*) կայ եւ մէկ նախակրթարան մը , ուր կմտնեն այն նորեկ աշակերտներն որ առաջին դասարանը մտնելու համար պէտք եղած գլխաւոր ուսմունքները դեռ չեն սովորած :

Ը. Ուսումնարանին մէջ եղած ամէն ուսմունքներն ալ պարտական են սովորելու աշակերտները , իրենց կարողութեանը համեմատ : Միայն ուսներէն լեզուին ուսմունքէն ազատ մնալ ուզողները (այսինքն Տաճկաստանէն եկող աշակերտները) ազատ են նաեւ Ռուսաց պատմութիւնը , մատենագրութիւնը եւ օրէնսգիտութիւնը սովորելէն :

Թ. Ուսումնարանին մէջ դասախօսութիւնները առհասարակ հայերէն լեզուով կլինին. բաց
Ռուսաց լեզուի, Ռուսաց պատմութեան եւ մատենագրութեան դասերը ռուսերէն կը տրուին, նմա-
նապէս Գաղղիացոց լեզուի եւ մատենագրութեան դասերը՝ գաղղիարէն: — Բաց յայնմանէ բար-
ձրագոյն ուսմանց մէկքանին առ այժմ գաղղիարէն, մէկքանին ալ ռուսերէն կրնան տրուիլ:

Ժ. Ուսման վերոյգրեալ նիւթերէն դուրս ինչ լեզու կամ գեղարուեստ որ ուզէ մէկը դաս առ-
նուլ տալ իւր որդոյն այս ուսումնարանիս մէջ, զոր օրինակ՝ յունարէն կամ լատիներէն կամ
գերմաներէն, եւ երաժշտութիւն, կամ զինավարժութիւն, նոցա համար սահմանեալ առանձին
վճարքը պիտի հատուցանէ:

ԺԱ. Տարեկան հանգստեան կամ պարապոյ միջոցը ամբողջ Յուլիս ամիսն է. եւ այն միջոցը
կարող են աշակերտք իրենց տներն երթալ՝ եթէ ծնողք կամեան, եւ ճանապարհի ծախքը վճարեն:

ԺԲ. Մեծ մտադրութիւն եւ ջանք կայ որ աշակերտաց կերակուրը չափաւոր լինի եւ սննդա-
րար, ննջարանը մաքուր եւ օդահար, աշխատութիւնը զբօսանքով բարեխառնած, եւ ընդհանրա-
պէս նոցա առողջութիւնը որչափ որ կարելի է խոհական չարքաշութեամբ ամբրցած:

ԺԳ. Ուսումնարանին բժիշկը ամէն օր անպակաս այցելութիւն կընէ հիւանդանոցին, ուր մաս-
նաւոր Հիւանդապահ կայ:

ԺԴ. Աշակերտաց հագուստը երկու տեսակ է, երկուքն ալ միաձեռն ու միօրինակ. մէկը դուրսը
հագնելու՝ կապտագոյն չուխայէ, Կայսերական հրամանաւ հաստատուած (*մունիֆր*), մէկալը
ներսը՝ ձմեռը սեւ չուխայէ, ամառը սեւ գունաւոր կտաւէ: — Ճերմակեղէնները ամառը շաբա-
թը երկու անգամ կփոխուին, ձմեռը մէկ անգամ: Այս բաներուն եւ ընդհանրապէս տղայոց մա-
քրութեանը յատկապէս ուշ դնողը Հանդերձապետն է:

ԺԵ. Ուսումնարանին մէջ սաստիկ մտադրութիւն կլինի որ աշակերտք իրենց քրիստոնէական
պարտքերը անպակաս եւ անպատճառ կատարեն. եւ կանոնապահ, հնազանդ, եղբայրասէր եւ
քաղաքավար, համեստ եւ առաքինի լինելու ջանք ընեն:

ԺԶ. Աշակերտք ոչ երբէք մինակ կմնան, եւ ոչ մինակ քալելու կամ զբօսանքի կելնեն, այլ
միշտ վերակացու կգտնուի հետերին. զիշերն ալ՝ բաց ի վերակացուէ՝ պահապան մը կհսկէ նրն-
ջարաններուն մէջ:

ԺԷ. Ամենայն աշակերտ պարտական է ամիսը մէկ անգամ նամակ գրելու իւր ծնողաց կամ
ազգականաց:

